


Կայ Բոյսուն



Գ. Դավիթ
1893

ԿԱՂ ԹՈՎՆԱՍԱ

Կ Ա Մ

«ԳԻՏՆԱԼԸ ՍԻՐԵԼ Է ԵՒ ՍԻՐԵԼՆ ԸՆԵԼ»

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۱۴ صفر ۳۱۱ و ۱۴
اگسٹوس ۳۰۹ تاریخی و ۳۶۳ نومر ولو رخصتامد سیله
نشر اولنشدر

مصارف آمریقان مسیو ز شرکی طرفدن تسوید اولنہ رق
طبع اولنشدر

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. Յ. ՊՕՅԱՀԵԱՆ

1893

891.99
4-17

621-42

2679

391.99

5-17

ԿԱՂ ԹՈՎՄԱՆ

Կ Ա Մ

«ԳԻՏՆԱԼԸ ՍԻՐԵԼ Է ԵՒ ՍԻՐԵԼՆ՝ ԸՆԵԼ»

Հետագայ պարզ պատմութիւնը կը
ցուցնէ թէ ամենէն ձախորդ պարագայք,
մինչեւ իսկ երբ միացեալ են սաստիկ տա-
ռապանաց հետ, պէտք չէ որ արգելեն զմեղ
Քրիստոսի նուիրելէ մեր կեանքը բոլոր
սրտով։

Լոնտոն քաղաքին արեւելեան մասին
ամենէն ողորմնլի տանց միոյն ձեզնայարկի
մթին եւ տիսուր մէկ խուցին մէջ կաղ
աղայ մը կար պառկած։ Երկու տարիէ հե-
տէ հոն կը գտնուէր զրեթէ անսպաշտպան
եւ անծանօթ վիճակի մէջ։ Երբ շատ փոքր
էր, մեռած էին իւր ծնողքը, թողով զնա
ծերունի աղգականունոյ մը դժոյն։

Ի ճնէ կաղ ըլլալով զրեթէ միշտ կը
տառապէր . բայց , ցորչափ ժամանակ իւր
կարողութիւնը կը ներէր , փայտի նեցուկ-
ներու օժանդակութեամբ հոս եւ հոն կ'եր-

թար եւ փոքրիկ ծառայութիւններ կ'ընէր քանի մը դահնեկան շահելու համար : Սակայն իւր ծնողաց մահէն ետքը տղան անկողին ինկած էր, եւ աղգականունին, զոր «Կրանի» կը կոչէր, մեծ անզգամութեամբ պառկեցուցած էր զնա իւր տան ամենէն վերի սենեակը, որմէ այլ եւս դուրս չելաւ :

Մայրը կարդալ եւ գրել սորվեցուցած էր անոր, բայց երբեք Յիսուսի եւ անոր սիրոյն վրայ խօսած չէր, վասն զի ինքն ալ տեղեակ չէր ճշմարտութեան : Երբեմն սակայն գիշեր ժամանակ, երբ կը ձիւնէր եւ սաստիկ պաղ հով կը վչէր, Թովմաս, տաքուկ ջերմոցին քով տաքնալու նպատակաւ միայն, կ'երթար Առաքելական Սրան կոչուած մօսակայ տուն մը, որ բարեսէր անձանց ձեռամբ կառուցուած էր եւ կը ծառայէր իրեւ ապաստանարան, ընթերցարան, զքոսարան եւ լսարան աղքատ թալկեցւոց : Ցուրտէն կարկամեալ, եւ մարմնով խոնջեալ, մեծ ուշադրութիւն չէր կրցած տալ այն խօսքերուն զորս կը լսէր այդպիսի գիշերներ : Սակայն, ստիպուելով իւր խցիկին մէջ առանձին մնալ շատ օրեր, սկսաւ տակաւ առ տակաւ յիշել իւր լսածները եւ աւելի ընդարձակ

ծանօթութեան փափաքիլ Աստուծոյ բաներուն նկատմամբ եւ, եթէ հնար է, ստանալ Աստուածաշունչ մը : Գիտէր թէ հոն խօսողք Աստուածաշունչէն ստացած էին իրենց գիտութիւնը : Ուստի օր մը այս խնդրոյն վրայ Կրանիի հետ խօսեցաւ քաջարառութեամբ, եւ միակ քաջալերութիւնը զոր ընդունեցաւ էր հեգնական ծիծաղ մը : «Աստուածաշունչի հետ գործ չունէր կինը : » « Թովմասի պէս տղայ մը ի՞նչ պիտի ընէ Աստուածաշունչը , » խորհեցաւնա : Գործն այսպէս թողուեցաւ ժամանակ մը, բայց տղուն այն փափաքը չանցաւ :

Օր մը, մեծ աղմուկ հանելով, սանդուխներէն վեր եկաւ բարձրախօն Յակոբոս, որ կաղ Թովմասի միակ բարեկամն էր աշխարհի վրայ : « Թովմաս , » զոչեց , « նոր մնառուկ մը առի , վաղը պիտի երթամ , երթամ : Եկայ քեզի մնաս բարով ըսել : » Բոլորովին յուղման մէջ էր . նըստաւ Թովմասի անկողնոյն վրայ , եւ երեսներուն քրախնքը սրբելով ըստ , « Պատուական ընծայ մը ունիմ քեզի համար , » եւ զքապանէն համեց թխագոյն թղթի բծաւոր կտորի մը մէջ փաթթուած բան մը : Թովմաս իւր արմուկներուն կոթնելով վեր

Վերցուց ինքզինքը անկողնոյն մէջ, առանց երբեք ուրախանալու այն լուրին համար զոր լսեց : « Փայլուն, նոր շիլին (վեց դահ.) մը քեղի, Թովմաս : Պիտի չվատնես մինչեւ որ շատ, շատ սաստիկ պէտք ունենաս : » « Ոհ, ո՞րչափ բարի ես, Յակոբոս, բայց ես հիմա մեծ պէտք մը ունիմ : » « Իրա՞ւ, լո՞նչ է : » « Աստուածաշունչ մը կ'ուզեմ : » « Աստուածաշունչ, ես բնաւ չեմ ուզեր : Ո՞վ երբեք լսած է թէ տղայ մը Աստուածաշունչի համար վատնած է այսչափ զբամ, զոր հաւաքերու համար ամիսներով աշխատեր եմ ես չարաչար : » « Մի բարկանար, սիրելիս, » ըսաւ կաղ Թովմաս . « ահա դուն պիտի մեկնիս առ կէ, եւ ես սովորականէն աւելի առանձին պիտի մնամ հոս, եւ, ոհ, ո՞րչափ կը փափիմ Աստուածաշունչի մը : Խնդրեմ, գնա, առ, Յակոբ — հիմա — ճիշդ այս երեկոյիս, մինչդեռ խանութը գոցուած չէ : Կրանի երբեք պիտի չառնէ . եթէ անոր յանձնեմ դրամը, ըմպելիքի պիտի գործածէ : » « Ի՞նչ պիտի ընես Աստուածաշունչը, եղբայր : Միայն ուսումնականները կը հասկնան այն զիրքը, » ըսաւ Յակոբոս գրեթէ բարկանալով : « Թերեւս . բայց,

Յակոբոս, սաստիկ է փափաքս . կ'ուզեմ զիտնալ թէ ձշմարի՛տ է ինչ որ Յիսուս կոչուած անձին նկատմամբ կը լսէլինք այն Առաքելական Սրահին մէջ, ուր զուն եւ ես սովորութիւն ունէինք երթալ երբեմն : Թող այս ըլլայ քու ընծաղ բաժանմանդ առթիւ . շատ երջանիկ պիտի ընես զիս : » « Շատ աղէկ, եղբայր, կ'երթամ . բայց ես չեմ զիտեր Աստուածաշունչ գնել : » « Մեր փողոցին անկիւնի գրատան մէջ կայ . գննը մէկ շիլին է . ես պատուհանին մէջ նշանակուած տեսած եմ, երբ քովէն կ'անցնէի ժամանակ մը : Շուտ շարժէ, Յակոբոս . խանութը կը գոցուի : »

Յակոբոս հաւանեցաւ մեծ գժկաման կութեամբ, եւ սանդուխէն իջաւ ոչ իւր սովորական արագաշարժութեամբ : Սակայն իւր տիրութեան յաղթեց մինչեւ որ վերադարձաւ գեղեցիկ Աստուածաշունչով : « Դրածախն ըսաւ թէ չէի կրնար տալ քեզի աւելի աղէկ բարեկամ մը, Թովմաս, եւ թէ շիլինը չէր կրնար աւելի աղէկ բանի տրուիլ : Կ'ըսէ թէ այս կրնայ հազար ոսկեւոյ արժէք ունենալ քեզի : Վերջապէս կ'երեւի թէ այս կը պարունակէ բաւական բան զոր պարտինք զիտնալ :

Թովմասի ուրախութիւնը եւ երախատագիտութիւնը սահման չունէր : « Գիտեմ ես , Յակոբոս . գիտեմ ես , » ըսաւ իւր կուրծքին վրայ սեղմելով Սուրբ Գիրքը : « Երջանիկ եմ հիմա . ոհ , ի՞նչ բարութիւն ըրիր դուն այս շիլնը աւելցունելով : »

Երկու տղայք այլ եւս չտեսան զիրար . բայց եթէ պարկեշտ տղան գիտնար լոկ թէ այն Սուրբ Գիրքն ի՞նչ պատուական գանձ եղաւ իւր կաղ բարեկամին , լիովին պիտի վարձատրուէր զոհողութեանն համար որով խնայեց այն շիլնը : Ամիս մը ետքը իւր Աստուածաշունչին պարունակութեան աւելի տեղեակ եղած իր Թովմաս քան շատեր որ կ'ըսեն թէ քսան տարի կարդացած են զայն : Սորված էր փրկութեան ճանապարհը . իւր միակ առաջնորդն եղած էր Հոգին Սուրբ : Սորված էր նաեւ թէ Աստուծոյ կամաց հնագանդիլը կը նշանակէր այլոց փրկութեան օգնել :

« Այս օրհնեալ լուրն այսպէս իմ քովս պահել չըլլար , » ըսաւ նա եւ սկսաւ խորհիլ մինչեւ որ վերջապէս որոշեց պարզ բայց գեղեցիկ զործ մը կատարել Վարդապետին համար : Իւր անկողինը շատ մօտ էր պատուհանին սեմին որ ցած էր : Մա-

տիտ մը եւ թուղթ գտաւ եւ Սուրբ Գրոց այլ եւ այլ համարներ ընդօրինակեց : Կը ծալլէր զանոնք , կ'ազօթէր անոնց վրայ , եւ յետոյ կը թափէր վար , աղմկալից փողոց , սա հասցէով .

« Ա. անցորդն — հանձեցէ + կարդալ : »

Կը յուսար թէ այս միջոցաւ մէկը կարող կ'ըլլայ լսել Յիսուսի եւ անոր փրկութեան վրայ : Սիրոյ այս ծառայութիւնը , որ հաւատարմութեամբ կը մատուցուէր , շարունակեց քանի մը շաբաթ . եւ ահա երեկոյ մը նա լսեց ոտնաձայն մը եւ անմիջապէս յետոյ բարձրահասակ եւ վայելչազգեստ մարդ մը մտաւ սենեակը եւ նըստաւ պատանւոյն անկողնոյն քով : « Դուք էք պատանին որ Սուրբ Գրոց համարներ կը թափէ պատուհանէ մը . այնպէս է , » հարցուց քաղցրութեամբ : « Այո , » ըսաւ Թովմաս զուարթութեամբ : « Լսեցի՞ք երբեք թէ մարդու ձեռք կ'անցնին անոնք : » « Շատերու , շատերու ձեռք : Կը հաւատա՞ք ինձ , եթէ ըսեմ թէ անցեալ երեկոյ ես ալ գտայ այդ համարներէն մին եւ Աստուծով օրհնութիւն եղաւ հոգւոյս : » « Կրնամ հաւատալ թէ Աստուծոյ Խօսքնամէն բան կ'ընէ , » ըսաւ պատանին խո-

Նարհութեամբ : « Եւ ես ահա եկայ , » ը-սաւ օտարականը , « անձամբ չնորդակա-լութիւն յայտնել քեզ : » « Ոչ ինձ , տէր . ես գրողն եմ միայն , Աստուած է օրհնողը : » « Եւ դուք երջանիկ էք այս գործը կա-տարելով Քրիստոսի համար , » ըստ այ-ցելուն : « Չէի կրնար աւելի երջանիկ ըլ-լալ , տէր : Բնաւ չեմ խորհիր կռնակիս ցաւին վրայ , վասն զի , երբ տեսնեմ զնա , պիտի չուրախսանամ ես ըսելով թէ այն օրէն երբ տեղեկութիւն ստացայ իւր վրայ՝ սկսայ ես բոլոր կարողութեամբս ծառայել իրեն : Կարծեմթէ շատ պատեհութիւններ ունիք դուք , այնպէս չէ : » « Ո՛հ , այս , տղաս , բայց զանց ըրած եմ զանոնք . սակայն Աստուծոյ օգնութեամբ կ'որոշեմ այսուհետեւ նոր կեանք մը վարել : Գիւղը , տանս մէջ ունիմ մահամերձ պատանեակ մը : Ստիպուեցայ քաղաքս գալ կարեւոր գործի մը համար : Երբ զնա համբուրեցի , մնաս բարեաւ ըսելով , ‘Հայր , ’ ըստ , ‘Երանի թէ գործ մը կատարած ըլլայի Յի-սուսի համար : Չեմ համարձակիր գատար-կաձեռն երեւիլ անոր առջեւ : Այս խօս-քերն ազդեցին ինձ օրն ի բուն , եւ միւս օրն ալ մինչեւ իրիկուն , երբ փոքրիկ

թուղթդ զլիսարկիս վրայ ինկաւ մինչ կ'անց-նէի այս փողոցէն : Բացի զայն եւ կար-դացի սա համարը . Բանէ որ ցործէի է , ոկրտ-է որ զիս երկրուն գործերը ժործեմ . էնւերը կու դայ որ անսարեւն մէկ չենար դործել (Յովհ. Թ. 4) : Այս թուեցաւ ինձ երկնային հրա-ման : Սթափիցուց զիս եւ ծնգաց վրայ բերաւ զիս զիշերը , եւ չկրցայ քնանալ մինչեւ որ կարող եղայ երգել ,

Որչափ քաղցը է այն ժամը ,
Որ խաչին առջեւ կենամ .
Կատարեալ խաղաղութիւն մը
Քրիստոսի մահէն կ'առնեմ :

Ես քսան երկու տարիէ հետէ Քրիստո-նէութիւն կը դաւանիմ , տղաս , եւ երբ հարցուցի եւ հասկցայ թէ ո՛վ փողոց կը թափէր այս համարները եւ ինչո՞ւ կը թա-փէր , այնպէս ամչցայ որ որոշեցի տուն երթալ եւ գործել նոյն վարդապետին հա-մար որուն գուն կը ծառայես այսքան հա-ւատարմութեամբ : »

Ուրախութեամն արտասուքներ թափե-ցան պատանւոյն աչքերէն : « Ոհ , բաւա-կան է , տէր , բաւական է : » « Բաէ ինձ ,

տղաս, ի՞նչպէս կրցար գտնել այդ գործին համար հարկ եղած թուղթը : » « Դժուար չէր այդ : Խօսեցայ կրանիի հետ եւ խօսք տուի հրաժարիլ կաթէն զոր շատ անգամ կու տար ինձ, եթէ հաճէր ի փոխարէն թուղթ գնել ինձ համար : Գիտես, տէր, թէ շատ պիտի չապրիմ ես : Բժիշկը կ'ըսէ թէ ցուրտ ձմրան քանի մը ամիսներ կրնան վերջ տալ իմ կեանքիս, եւ կաթիլ մը կաթը օրհնեալ Փրկչիս համար զոհել մեծ բան չէ : Երջանիկ են այն մարդիկ որ շատ բան կրնան տալ անոր : » Այցելուն արձակեց խոր հառաչ մը : « Տղաս, դուն այս ողորմնի սենեակիդ մէջ, զոհողութիւններ ընելով Յիսուսի համար, շատ աւելի երջանիկ ես քան հազարաւոր անձինք որք կ'ըսեն թէ անոր կը վերաբերին, եւ ունին ժամանակ, տաղանդ եւ զրամ, բայց քիչ բան կամ ոչինչ կ'ընեն Անոր համար : » « Չեն գիտեր զնա, տէր : Գիտնալը սիրել է եւ սիրելն՝ ընել : Առանց գործի՝ սէր չըլլար : » « Իրաւունք ունիս, Թովմաս : Բայց հիմա քեզի դառնանք : Ես Յիսուսի համար զործել պիտի սկսիմ նախ զքեզ երջանկացունելով : Կ'ուղես վերջին օրերդ անցունել կաղ եւ անդա-

մալոյժ պատանիներու յատկացեալ տան մը մէջ, ուր պիտի խնամուիս ըստ ամենայնի եւ ուր պիտի տեսնես ծառերը եւ ծաղիկները եւ պիտի լսես թունոց երգը : Եթէ ուզես, Թովմաս, կրնամ ես տանիլ զքեզ այլպիսի տեղ մը որ հեռի չէ մեր տունէն : »

Յոգնած պատանին եռանդեամբ նայեցաւ մարդուն սիրալիր երեսաց եւ քանի մը վայրկեան լուռ մնալէ եռքը պատասխանեց . « Ծնորհակալ եմ, տէր : Ես լսած եմ այդպիսի տուններու վրայ, բայց փափաք չունիմ հեշտ մահուան քանի որ Նա մեռաւ դժնդակ մահուամբ : Կրնայ ըլլալ որ սիրտս չափէն աւելի տամ հանգստութիւն եւ զուարձութիւնն : Կ'ուղեմ ես նայիլ մանաւանդ Անոր եւ այս գործը կատարել մինչեւ որ գայ զիս տանիլ : Ինձ Նման տղու մը համար լիուլի ուրախութիւն է Անոր հետ բնակիլ վերն յաւիտեանս յաւիտենից : » Այցելուն աւելի զգածուեցաւ եւ աւելի ամցաւ : « Յատ աղէկ, տղաս . ուրեմն պիտի աշխատիմ որ գուն, որչափ ապրիս, ունենաս յարմար կերակուր, նաեւ բոլոր թուղթը որ պէտք կ'ըլլայ քեզ : Ամէն բան պիտի կար-

գաղրեմ շրջիկ քարոզչուհւոյ մը ձեռամբ : Արդ, սիրելի տղաս, կ'ուզեմ որ մեկնելէս առաջ բարձրածայն ազօթես ինձ համար : » Յետոյ զօրաւոր այցելուն ծնգաց վրայ եւ կաւ մահամերձ տղուն անկողնին քով, հազիւ կարենալով զսպել իւր լացը, երբ ձեռքերով ծածկեց իւր դէմքը : Տղան վարանեցաւ երբ լսեց այս առաջարկութիւնը, բայց երբ տեսաւ մարդը խոնարհեալ եւ լսեց անոր լացը, հասկցաւ թէ պարտական էր ընդունիլ անոր խնդիրը : Երկնային լոյս մը ծագեցաւ իւր ողորմելի եւ տժգոյն դէմքին վրայ, երբ խորին պատկառանօք ըսաւ, « Տէր Յիսուս, զիտեմ թէ կը լսես, եւ շատ չնորհակալ եմ որ այս բարեկամը զրկեցիր հոս քաջաւերելու զիս իմ գործիս մէջ : Հիմա, Տէր Յիսուս, նա քիչ մը խոռված է որ անցելոյն մէջ ըստ բաւականին գործած չէ քեզ համար : Կը հաճի՞ս օգնել անոր որ այսուհետեւ ջանայ բան մը զանց չընել . եւ, Տէր, եթէ քու կամքդ է, հիմա զրկէ զնա եւ պատմել տուր միւս հարուստներուն թէ չեն զիտեր զբեզ, եթէ չեն գործեր Քեզ համար : Շնորհակալ եմ քեզմէ, ով Յիսուս, բոլոր թուղթին եւ կերակրոյն

համար որ ինձ պիտի գայ ցորչափ ապրիմ ես : Թերեւս քիչ մը ժամանակ պիտի ապրիմ ես եւ յառաջ տանիմ այս գործը Քեզ համար : Հիմա, Տէր Յիսուս, եթէ կը հաճիս, օրհնէ այս բարի բարեկամը իւր ուղեւորութեան ժամանակ եւ միշտ . կը ինդրեմ թու անուանդ համար : » « Ամէն, » ըստ այցելուն ամենայն եռանդեամբ :

Յայնժամ այցելուն ոտք ելաւ եւ մեկնեցաւ : Լոնտոնէ ելլելէ առաջ ամէն կարգադրութիւն ըրաւ խնամելի տղուն համար եւ ապա զուարթագոյն սրտով վերագրածաւ իւր զեղեցիկ ամարանոցը եւ ապրեցաւ Քրիստոսի համար : Ըստ կարի շուտով շինեց առաքելական սրան մը իւր տան մօտ եւ սկսաւ հոն զիւզացւոց քարոզել զՅիսուս : Երբ խոստովանեցաւ թէ զիւզացւոց նկատմամբ իւր անհոգութեամբ մեղանչած էր մինչեւ այն ժամանակ, եւ պատմեց թէ ինքն երկրորդ անգամ դարձի եկաւ սոյն կազ Թովլմասի ձեռամբ եւ կարդաց Սուլբբ Գրոց այն համարը որ ինկած էր իւր զլսարկին վրայ, զիւզացիներէն շատեր առաջնորդուեցան փնտոել զՅիսուս :

Շրջիկ քարոզչուհւոյն ձեռամբ երբեմն

լուր կու գար այն մահամերձ տղուն վրայ,
բայց ձմեռն սկսած էր եւ ձիւնը իւր բիւ-
րեղանման սպիտակութեամբ ծածկած էր
զետինը, երբ լսեցին թէ միրելին թովմաս
գնաց իւր Փրկչին քով: Նոյն թղթատա-
րով հասաւ ծրար մը որ կը պարունակէր
թովմասի այնքան մեծարուած եւ այնքան
գործածուած Աստուածաշունչը: Այն գեղե-
ցիկ տան մէջ ո՞րչափ պատուական նշան
եղաւ նշաններով լի այդ Աստուածաշունչը.
վասն զի երբ կաղին բարեկամը փոխ տուաւ
զայն իւր փոքրագոյն որդւոյն, այն խնամ-
եալ դիտողութիւնը եւ պարզ եւ կարճ
աղօթքները, զորս կաղ պատանին գրած
էր անոր լուսանցքին մէջ, նաեւ սա վեր-
ջին իդը — « Իցիւ թէ այս Սուրբ Գիրքն
ըլլայ ուրիշ մը այնպէս մեծ բարեկամ
որպէս եղաւ ինձ » — զոր նա իւր մահ-
ուանէն իրը շաբաթ մը յառաջ գրած էր
գիրքին ձակատը, խորին տպաւորութիւն
գործեցին պատանւոյն վրայ. եւ նա նուի-
րեց զինքն Աստուածոյ եւ յետոյ միսիոնա-
րական պաշտօնով գնաց օտար երկիր, եւ
կաղ թովմասի եւ անոր Քրիստոնէական
գործին վրայ պատմելու առթիւ ցուցուց
այդ մաշած Աստուածաշունչը կեզրոնական

Ա. Քրիստոնէու-
թիւն ընդունած էին:

Ընթերցողը չը տեսներ թէ ինչ կրնայ
ընել խոնարհ եւ անձնուրաց անձ մը որ
բոլոր սրտով Աստուածոյ նուիրուած է:
Չենք համոզուիր թէ յոյժ ցաւալի է որ
շատ չեն այսպիսիք: Հապարաւոր տիսուր,
յոդնած սիրտեր կարօտ են սիրոյ այն
փոքրիկ ծառայութեան զոր կրնայինք մա-
տուցանել: Պէտք է ուրեմն որ մեր հան-
գիստը փնտունք, մեր հաճոյքը վայելենք,
կամ մեր հեշտութեանց հետամուռ ըլլանք:
Միլիոնաւոր խաւարեալ հոգիներ լոյս կ'ա-
զաղակեն եւ պիտի շարունակեն խաւարի
մէջ խարխափիլ, եթէ մենէ շատեր, որ կը
դաւանին թէ կը սիրեն զԲրիստոս, ապրին
իրենց շահը եւ հանգիստը փնտուելով: Այ-
սօր, առանց աշխարհի օգնութեան, Քրիս-
տոնէական Եկեղեցին կրնայ դիւրաւ զըր-
կել այնչափ միսիոնար որ բովանդակ աշ-
խարհ աւետարանուի. սակայն իւր անյօ-
ժարութիւնն է սեւ կէտ մը եւ կ'արատա-
ւորէ իւր գեղեցիկ անունը անջինջ բծով
մը, զոր բաց ի Յիսուսի արիւնէն՝ ոչ ինչ
կարող է մաքրել: Երանի թէ Աստուածոյ
չոգին իւր մեծ զօրութեամբ վերցունէր մեր

մէջէն ամէն ծուլութիւն, անհարազատութիւն եւ անձնասիրութիւն, վասն զի Քրիստոսի հետեւիլը կը նշանակէ զոհողութիւն, անձնուրացութիւն, եւ չկայ սրբութիւն առանց անձնուրացութեան: Եթէ մահամերձ պատանի մը իւր ցաւոց եւ չքաւութեան մէջ կրնար ուրախութեամբ զոհել ումագ մը կաթը, որով կը զովանար իւր պապակեալ բերանը եւ մասամբ կը մնանէր իւր յոդնած մարմինը, անշուշտ հնարաւոր է մեղ ընել աւելի բաներ:



7033

181

2001

օօՏՏՏՏՏՏ

«Ազգային գրադարան



NL0015545

